

ՏԵՔՍՏԻ ՄՈԴԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ԿՈՆՖԼԻԿՏԸ

Ռ. Խ. ՄԻԿԱՅԵԼՅԱՆ

Հոդվածում քննարկվում է տեքստի իրական և անիրական մոդալությունը, որը հանդիսանում է իրավական նշանակալիություն ունեցող հանգամանքների քերականական կարևոր չափանիշ:

THE MODALITY OF THE TEXT AND INFORMATION CONFLICT

R. KH. MIKAYELIAN

The article refers to the real and unreal modality of the text which considers to be an important grammatical criterion of circumstances having legal significance.

ԼՐԱԳՐԱՅԻՆ ՏԵՔՍՏԻ ԺԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՃԱԿԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ. Ֆ. ԲԴԵՅԱՆ

ԳՊՀ օտար լեզուների ամբիոնի վարիչ

Լրագրի լեզուն միանգամայն յուրօրինակ է, այն մեծ չափով նպաստում է բառապաշարի հարստացմանը, գործառական ոճերի զարգացմանը, օժանդակում ժողովրդական լայն զանգվածների խոսքի մշակույթի բարձրացմանը: Լրագրերի լեզուն ունի իր հաղորդակցական ուրույն առանձնահատկությունները: Նրանով հրատարակվում են բազմաբնույթ և բազմատեսակ նյութեր: Լրագրային լեզվի բնորոշ հատկանիշներից մեկը բազմաժանրայնությունն է:

Ուսումնասիրությունները վկայում են, որ բոլոր լրագրային ժանրերը կարելի է բաժանել երեք ընդգրկուն խմբի՝ *տեղեկատվական, վերլուծական և եղարվեստական-հրապարակախոսական*:

Տեղեկատվական ժանրերին են պատկանում փոքրածավալ տեղեկատվական հաղորդագրությունը, հարցազրույցը, ռեպորտաժը, թղթակցությունը և այլն:

Այս ժանրերը միավորվում են մեկ անվան մեջ՝ իրենց կատարած դերով, ընդհանուր նպատակներով, իրականության մեջ տեղ գտած իրադարձությունների արտացոլման համընդհանուր միջոցներով ու բնույթով: Սակայն այս համընդհանրությունը հարաբերական է, քանի որ դրանցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն առանձնահատկությունները՝ որոշակի տարբերություններ դնելով իր իսկ գործառության սահմանների մեջ: Այս տարբերությունները հիմնականում արտահայտվում են հաղորդակցական ու գործառնական հայեցակետերում:

Տեղեկատվական ժանրերի համընդհանրությունը այն է, որ վերջիններս հիմնականում աչքի են ընկնում նյութի օբյեկտիվ շարադրմամբ, թարմ տեղեկությունների հաղորդմամբ, հաղորդակցության պարզությամբ և այլն:

Տեղեկատվական հաղորդագրությունը լրագրային տեղեկատվության պարզ ձևերից մեկն է, որը սովորաբար փոքրածավալ ու սեղմ տեղեկատվություն է պարունակում՝ ընդգրկելով որևէ կարևոր նորություն, փաստ կամ իրադարձություն:

Տեղեկատվական հաղորդագրության հիմնական տարբերակիչ հատկանիշն այն է, որ այն, որպես կանոն, ներկայացնում է միայն ամենաթարմ ու նոր փաստեր՝ առանց որևէ մանրամասնությունների:

Նման տեղեկատվական նյութերը երբեմն չունեն վերնագիր, և նրանք հիմնականում պատասխանում են «ի՞նչ», «ո՞րտեղ» և «ե՞րբ» հարցերին: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ տեղեկատվական ժանրի նպատակը փաստերի ներկայացումն է, այլ ոչ թե վերջիններիս նկարագրությունն ու մեկնաբանումը: Այս առանձնահատկությունների հետ մեկտեղ ժանրի խնդրով է պայմանավորվում նրա յուրահատուկ ոճական գծերից մեկը՝ լակոնիզմը՝ շարադրանքի սեղմությունն ու հակիրճությունը:

Ավելորդ տարրերը, բառերն ու արտահայտությունները, շարահյուսական կառույցներն ու անհատական ոճավորումն ընկալվում են որպես տվյալ ժանրի ոճական թերություն և տեղեկատվական նորմերի խախտում:

Հարցագրույցն ամենատարածված տեղեկատվական ժանրերից մեկն է: Նրա նպատակը իրադարձությունների մասին կարծիք հաղորդելը, ընթերցողներին ընդհանուր խնդիրներ ներկայացնելն է՝ կապված մարդկային կյանքի բազում բնագավառների հետ: Հարցագրույցը նյութի հաղորդման իրական ձև է, քանի որ ունի համոզման յուրահատուկ հնարավորություններ:

Այլ ժանրերի նման հարցագրույցի առանձնահատկությունների մեջ են մտնում հրատապությունը, հաղորդակցական հստակ նպատակները, հետաքրքրությունն ու բովանդակայնությունը: Այս ժանրն իրենից ներկայացնում է ավարտուն տեքստ, որը բաղկացած է մշակված «հարց-պատասխան» բանաձևերից:

Հարցագրույցի ոճը կարող է տարբեր երանգներ ստանալ տարբեր իրադրություններում՝ կապված թեմատիկ որոշակի ոլորտների ու հաղորդակցական նպատակների հետ: Հենց սրանով է պայմանավորվում խոսքի կադապրայնությունը, գրքայնությունը, իսկ մյուս կողմից՝ հաղորդակցականությունն ու հուզական երանգը:

Հարցագրույցը հաղորդակցման երկկողմանի գործընթաց է. առաջին հերթին խոսակիցը միշտ կապի մեջ է գտնվում հարցադրող - լրագրողի հետ, որը վարում է զրույցը և, հետևաբար, կարգավորում է նաև նրա խոսքը: Մյուս կողմից լրագրողն ու խոսակիցը միշտ պետք է նկատի ունենան ընթերցողների համապատասխան արձագանքը:

Հարցագրույցի ժանրն աչքի է ընկնում իր հստակ հաղորդակցման նպատակներով, միակցում է ինչպես պաշտոնական, այնպես էլ խոսակցական տարրերը, քանի որ նման տեքստերում հանդես են գալիս տարբեր տարիքի ու մասնագիտության, մտավոր ու կրթական տարբեր կարողությունների տեր մարդիկ: Բացի այդ, երկխոսությունն ավելի մեծ գործաբանական ազդեցություն է թողնում ընթերցողի վրա, որը հասցեատիրոջը կամա, թե ակամա ներքաշում է զրույցի մեջ, և կարծես հասցեատերն ինքն է դառնում տվյալ հարցագրույցի մասնակիցը: Այս տեսակետից երկխոսությունը լեզվական հաղորդակցության տեսանկյունից առավել ակտիվ գործընթաց է, քան մենախոսությունը:

Ռեպորտաժը տեղեկատվական ժանր է, որը հաճախ իր մեջ զուգակցում է բոլոր տեղեկատվական ժանրերի տարրերը /գրույց, նկարագրություն, փաստացի հաղորդագրություն, մեկնաբանություն և այլն/: Ռեպորտաժն ընթերցողին տալիս է ակնառու պատկերացում այս կամ այն տարածաշրջանում ծավալված կամ ծավալվող իրադարձության մասին՝ ականատեսի ու գործող անձի ընկալման միջոցով: Այս ժանրի նպատակն է կարևոր մանրամասնություններով և վառ ձևերով հաղորդել առավել նշանակալիցն ու հետաքրքրականը՝ ի տարբերություն խմբի մյուս ժանրերի:

Մյուս տեղեկատվական ժանրերից *ռեպորտաժը* տարբերվում է նրանով, որ հեղինակն ինքն է մասնակից դառնում իրադարձությանը: Այստեղից հետևում է, որ *ռեպորտաժը* պետք է հարուստ լինի փաստերով, նկարագրություններով, իրադարձության վերաբերյալ հեղինակի անհատական մոտեցումներով ու գնահատականներով:

Ռեպորտաժի ժանրում հանդես են գալիս երկու հակադիր բևեռ՝ հեղինակային «ես»-ը և շարադրանքի վավերագրական ու օբյեկտիվ բնույթը: Այս երկու գործոններն էլ հենց բնորոշում են ժանրի լեզուն և ոճը:

Թղթակցությունը զանգվածային ու հրատապ բնույթի ժանրերից է, որի էությունը մեզ շրջապատող իրականությունը փաստերով պատկերելու, այդ իրականության այս կամ այն երևույթը լրագրելուն ու ամսագրելուն լուսաբանելու մեջ է:

Այս ժանրի համար կարևորություն են ներկայացնում իրադարձությունները, փաստերը, օրինակները և երբեմն էլ՝ դրանց նկարագրությունը: Այստեղ կարևորվում է նաև փաստի դրսևորման վայրը, ժամանակը, հանգամանքները, գործող անձինք և այլն: Այսուհանդերձ, դա վերարտադրում է իրականության տվյալ կոնկրետ պատկերը: Նման տեքստի լեզուն, որպես կանոն, չեզոք է, կադապրված, սակայն այստեղ առկա է նաև հուզարտահայտչական ու երանգային ոճավորումը, ինչը հնարավորին չափ հասցված է նվազագույն մակարդակի:

* * *

Վերլուծական ժանրերի շարքին նպատակահարմար է դասել լրագրային կարգի զանազան հոդվածների, *մամակների*, *մամուլի տեսության* և այլ ժանրերը:

Նման տեքստերը ենթադրում են մյուսի խորը զննում և վերլուծություն, ինչպես նաև տեքստային ավելի ծավալուն հատվածներ: Եթե տեղեկատվական ժանրում հաղորդվում են երևույթների, փաստերի ու իրադարձությունների մասին, ապա այս ժանրերում տրվում են այդ փաստերի ու իրադարձությունների տարբեր կազմի վերլուծություններ ու մեկնաբանություններ: Սա է պատճառը, որ վերլուծական ժանրերն աչքի են ընկնում իրենց արտահայտչական ու հուզական նրբերանգներով, հեղինակային սուբյեկտիվ եղանակավորման տարրերով ու հայեցակարգային մտորումներով:

Ժամանակակից լրագրերում և ամսագրերում մեծ տարածում ունի հրապարակախոսական բնույթ կրող առաջնորդող հոդվածի ժանրը: Բովանդակության տեսակետից առաջնորդող հոդվածը ենթադրում է տեսական և գործնական

ընդգրկում ընդհանրացումներ, փաստերի ու երևույթների բազմակողմանի վերլուծություն:

Նման հոդվածի թեմատիկ կազմը բավականին բազմատարր է և կարող է ընդգրկել մեզ շրջապատող ողջ իրականությունը: Այստեղ ներթափանցում են տարբեր ոճեր՝ գիտական, վարչական, գեղարվեստական, հրապարակախոսական: Առաջնորդող հոդվածներն առավել կարևոր են գաղափարախոսական, քարոզչական ու քաղաքական նյութի ներկայացման համար, որտեղ հաճախ առաջ են քաշվում ընդհանուր բնույթի լայնածավալ խնդիրներ:

Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ այս ժանրը միավորում, ընդհանրացնում և կոնկրետացնում է լրագրային այլ ժանրերում հրապարակվող նյութերը:

Ժանրին հատուկ են հուզականությունը, արտահայտչականությունն ու պատկերավորությունը, հեղինակային «ես»-ի վառ արտահայտությունը, քանի որ հրապարակախոսական ստեղծագործություն է և համարվում է քարոզչության իրական և ռեալ ձևերից մեկը: Սա էլ վկայում է հոդվածի հարուստ շարահյուսական ու դարձվածքային համակարգի մասին: Մյուս կողմից նման տեքստերին հատուկ է հրահանգային բնույթը, որն ընդգծում ու սահմանափակում է ժանրի շրջանակները՝ դարձնելով խիստ և կանոնավոր: Այստեղ ակնհայտ ոճակազմական դեր է կատարում նաև տեղեկատվության գործոնը. ցանկացած միտք անհրաժեշտ է լրացնել փաստերով, թվերով, օրինակներով և այլն:

Առաջնորդող հոդվածներն ունեն տեքստի գործաբանական բավականին ընդգրկում հնարավորություններ:

Որոշ լրագրեր կամ ամսագրեր հատուկ էջ են տրամադրում տվյալ խմագրությանն ուղղված ընթերցողների մամակների: Այսպիսով, մամուլում ձևավորվում է լրագրային մի յուրատեսակ ժանր՝ *մամակ*, որն ավելի է կայունացնում «լրագիր-ընթերցող» փոխհարաբերությունը:

Այսպիսի մամակները հավաստում են մամուլի ժողովրդայնության դրսևորման մասին, ցույց են տալիս ընթերցող լայն զանգվածների հետաքրքրությունները, առաջարկությունները, նրանց հուզող խնդիրները և այլն:

Թերևս դժվար է խոսել այս ժանրի մեկ միասնական ոճի մասին, որովհետև մամակների հեղինակները տարբեր են թե՛ մասնագիտական, թե՛ կրթական, թե՛ տարիքային մակարդակներով: Այստեղ լեզվական միջոցների ընտրության համար բացառիկ կարևորություն են ներկայացնում խոսքի առարկայի և խոսակցի նկատմամբ խոսողի ունեցած վերաբերմունքը, հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերությունը, խոսքի անմիջական նպատակադրությունը: Տարբեր մամակներում խոսքը տարբեր ձևերով, հուզարտահայտչական զանազան երանգներով է հանդես գալիս: Ասվածից երևում է, որ լրագրային մամակներում գերակշռում են իրադրական ոճերը:

Լայն տարածում ունի նաև *մամուլի տեսության* ժանրը: Տեսություններ են հրատարակվում ինչպես քաղաքական, տնտեսական և միջազգային թեմաներով, այնպես էլ գիտության, արվեստի ու մշակույթի տարբեր բնագավառների վերաբերյալ:

Մամուլի տեսության նպատակը լրագրերի ու ամսագրերի բովանդակությունը բազմակողմանիորեն վերլուծելը, տեղեկատվական տարբեր կարգի հոդվածներին գնահատական տալը, նրանց առջև դրված խնդիրները ցույց տալը, ձեռք

բերված նվաճումները քաջալերելն է և այլն: Այսպիսի նյութերում, որպես կանոն, արտահայտվում են տվյալ պարբերականի խմբագրության, այլ ոչ թե առանձին հեղինակի կարծիքը:

Մամուլի այս ժանրին բնորոշ են՝ բովանդակության խորը վերլուծությունը, թեմայի հրատապությունը, ճշմարտացի հետևություններն ու ընդհանրացումները, լեզվի արտահայտչականությունն ու հուզական տարրերի դրսևորումները և այլն:

Ժանրն ունի ներգործության լայն հնարավորություններ, քանի որ հիմնականում կրում է քննադատական, հաստատող, ապացուցող և համոզող բնույթ:

* * *

Գեղարվեստական-հրապարակախոսական ժանրերի շարքին են պատկանում ակնարկը, ֆելիետոնը, գրախոսությունը և այլն:

Սյուս ժանրերի նման, հիմնված լինելով հասարակական նշանակություն ունեցող երևույթների հետ կապված կոնկրետ փաստերի վրա, գեղարվեստական-հրապարակախոսական բնույթի ժանրերը թեմայի բացահայտման նպատակով լայնորեն օգտագործում են գեղարվեստական-արտահայտչական միջոցներ ու հրապարակախոսությանը հատուկ հնարներ: Նմանատիպ նյութերում, որպես կանոն, տրվում են առաջադրված փաստերի, իրականության երևույթների ու իրադարձությունների գնահատականներ, առաջ են քաշվում հասարակական նշանակություն ունեցող հարցեր, որոնք ուշադրության ու հույզերի որոշակի լարում են պահանջում ընթերցողից: Այս ժանրերն յուրահատուկ են իրենց լեզվի գեղագիտական կողմով, որն, անկասկած, ընթերցողին հուզելու և նրա վրա ազդելու առաջնակարգ նախապայմանն է:

Ակնարկի ժանրը գեղարվեստական ու հրապարակախոսական նյութ է հրապարակում: Ժանրի բովանդակությունը կապված է արտահայտված երևույթի մասին հեղինակային անհատական վերաբերմունքի հետ: Ակնարկին հատուկ է լեզվի պատկերավորության ու արտահայտչականության հարուստ միջոցների կիրառությունը: Տվյալ ժանրում, որպես կանոն, բարձրացվում են արդիական խնդիրներ, իսկ երևույթներն ու փաստերը նկարագրելիս հեղինակը հիմնվում է կյանքի ճշմարտացի պատկերման սկզբունքների վրա:

Մեծապես կարևորվում է ակնարկի գրական մշակումը և կառուցվածքը, ակնարկը պետք է ունենա բովանդակալից սյուժե, լիովին համապատասխանի հրապարակախոսական պահանջներին:

Չետաքրքիր յուրահատկություններ ունի ամսագրերում հրապարակված ակնարկը, որը որոշակիորեն տարբերվում է լրագրային ակնարկից: Ամսագրային ակնարկը, որպես կանոն, աչքի է ընկնում իր ծավալով և առավել խորությամբ ու անհրաժեշտ մանրամասնություններով է ներկայացնում քննակվող հարցը, իր հարուստ արտայտչամիջոցներով ակնարկն ավելի նմանվում է գեղարվեստական արձակին՝ ստեղծելով հոգեբանական զանազան վիճակներ, կերպարներ ու ընդհանրացումներ:

Իր բովանդակությամբ և ոճական միջոցների բազմազանությամբ, պատկերավորության ու արտահայտչամիջոցների հարուստ կիրառությամբ մամուլի հիմնական ժանրերից առանձնացվում է *ֆելիետոնը*:

Ֆելիետոնը բնութիւնով ծաղրական ու քննադատական ժանր է, ուր խիստ կերպով դատապարտվում են մարդկային չար արարքներն ու հասարակական կյանքի բացասական կողմերը: Ֆելիետոնի դրսևորման ձևերը բազմազան են, քանի որ, պարունակելով հրապարակախոսության և գեղարվեստական տարրեր, միաժամանակ բավարարում է երկուսի պահանջները:

Ֆելիետոնի հրապարակախոսական բնույթը հանդես է գալիս արդիականության, անհամեմատ բաց բնույթի, հուզականության մեջ, որոնք հնարավորություն են ստեղծում տեքստի հեղինակին անմիջական կերպով գնահատական տալ իրականության բացասական կողմերին: Ժանրի գեղարվեստական բնույթն այն է, որ ֆելիետոնն արտացոլում է իրականությունը գեղարվեստական կերպարների միջոցով:

Հատկանշական է, որ և՛ ակնարկը, և՛ ֆելիետոնն ունեն ընթերցողների վրա ներգործելու հնարավորություններ՝ իրենց ուրույն լեզվաոճական առանձնահատկությունների շնորհիվ:

Գրախոսության նպատակը գեղարվեստական երկի, երաժշտական, թատերական և այլ ստեղծագործությունների խորը վերլուծություն և գնահատումն է, ինչը, ինքնին, ենթադրում է ժանրի արտահայտչական և գնահատողական միջոցների լայն կիրառություններ:

Լրագրային ժանրերի շարքին պետք է դասել նաև *լրագրային գովազդը*, որը վերոհիշյալ ժանրային խմբերից իր մեջ պարունակում է թե՛ տեղեկատվական, թե՛ գեղարվեստական - հրապարակախոսական տարրեր, քանի որ, տեղեկատվություն հաղորդելուց բացի, ունի նաև համոզելու և ներգործելու գործառնություն:

Գոյություն ունեն նաև այլ տեղեկատվական ժանրեր ու ենթաժանրեր, սակայն նպատակահարմար է սահմանափակվել մամուլի լեզվին առավել բնորոշ և լրագրերի ու ամսագրերի էջերում լայն կիրառություն գտած վերոհիշյալ ժանրերով:

Այսպիսով, լրագրային լեզուն հարուստ է ժանրային տարատեսակներով, որոնք միմյանցից տարբերվում են թե՛ շարադրման ոճով ու ծավալով, թե՛ տեղեկատվության մատուցման ձևով, թե՛ իրականության փաստերի ու երևույթների արտացոլման համար կիրառվող միջոցներով, թե՛ հաղորդակցական ուրույն հնարավորություններով:

Լրագրերի լեզուն ճկուն է, ունի նույնքան ճկուն համակարգ, հագեցած է տեղեկատվությամբ և դարձել է այսօր տեղեկատվության ամենաթանկ արժեքը: Լրագրերի լեզուն, նախատեսված լինելով բազմահազար ընթերցողների համար, ստիպված է հաշվի առնել ընթերցող լայն զանգվածների խոսքային սովորույթը և վարժվածությունը, և այս առումով նրան խորթ է պահպանողականությունը: Լրագրային լեզու շատ արագ ներթափանցում են այլ ոճերի տարրեր, որոնք նախկինում բնորոշ չեն եղել մամուլի ժանրերի համար: Ահա թե ինչու որոշ հետազոտողներ լրագրային լեզվի տարածայնությունը դիտում են ոչ միայն նրա ժանրերի բնորոշ հատկանիշներից, այլև լրագրային խոսքի հիմնական նորմերից մեկը: Լրագրային ժանրերի զարգացումը կապվում է լրագրային լեզվի անընդհատ կատարելագործման և մշակման հետ: Լրագրերի էջերում տեղ են գտնում տարբեր թեմաների և ժանրերի նյութեր: Մի ժանրին հատուկ է առավելագույն սեղմությունը, մյուսին՝ ընդհակառակը, բնորոշ է լեզվի արտահայտչականության և պատվերավորության հարուստ միջոցների օգտագործումը:

* * *

Ցանկացած տեքստի նման տեղեկատվական հաղորդագրությունն էլ ունի իր կառուցվածքային տարրերը, այն է՝ վերնագիր – նախաբան – հիմնամաս – ավարտամաս: Տեղեկատվական հաղորդագրության մեջ առավել մեծ դեր են կատարում վերնագիրն ու նախաբանը: Վերնագիրը մի քանի բառով, շատ հակիրճ տեղեկացնում է, թե ինչի մասին է գնալու խոսքը: Այն ուղղորդում է ընթերցողին հաղորդվող նյութի հեշտ ընկալմանը: Նախաբանը հույժ կարևոր դեր է կատարում տեղեկատվական հաղորդագրության ժանրում, քանի որ այն տեղեկացնում է տեքստի հիմնական բովանդակության մասին:

Նախաբանի կազմությունը պայմանավորված է երկու գործոնով՝ նորի, գլխավորի ընդգծման անհրաժեշտությամբ և հաղորդվող նյութի սկիզբը շարահյուսութեն ձևավորելով:

Նախադասության սկիզբը ձևավորելու տարբեր ձևեր կան: Հարկ է նշել, որ շրջում շարադասությունը, բազմիցս օգտագործվելով տարբեր ժանրերում և ոճերում, տեղեկատվական հաղորդագրության ժանրում հանդես է գալիս որպես նախադասության սկիզբը ձևավորելու միջոց: Տեղեկատվական հաղորդագրության առաջին նախադասության շրջադասության ժամանակ նրա երկրորդական անդամը դրվում է նախադասության սկզբում:

Islamabad, Pakistan – Prime Minister expressed confidence that India – held Kashmir would break away and become part of Pakistan. (տեղի պարագայի շրջադասություն):

The women, from Farsae, set-out for a one-day outing Aug. 14, hiking-up a ridgeline in the back of a rugged tropical valley on the windward side of Oahu, situated 15 miles north of Honolulu. (լրացման շրջադասություն):

Տեղեկատվական հաղորդագրության մեջ պարբերությունները օժանդակ, լրացուցիչ դեր են կատարում: Պարբերությունների կառուցումը պայմանավորված է գործաբանական սկզբունքներով, այն է՝ հաղորդվող նյութի մատչելի մատուցմամբ և ընթերցողի ընկալման աստիճանով: Հաղորդվող նյութի ծավալը նույնպես շատ է կարևորվում, որի պատճառով էլ հաճախ անհրաժեշտություն է առաջանում խախտել պարբերություն կառուցելու հիմնական կանոնը, այն է՝ մտքի միասնությունը: Պարբերությունները միմյանց հետ կարող են կապակցվել տարբեր ձևերով՝ պատճառահետևանքային կապերով, հակադրության կամ համեմատության հիման վրա, ինչպես նաև ընդհանուրից մասնավորը կամ մասնավորից ընդհանուրը սկզբունքով:

American Trekker Found in Australia

Perth, Australia- An American tourist was found alive early Monday after surviving for 40 days in one of Australia's most inhospitable regions.

Searchers in a helicopter found Robert Boguchki, 33, a volunteer fireman from Fairbanks, Alaska, in a dry creek bed in the Great Sandy Desert. Mr. Boguchki was transferred to a hospital in Broome, 1,000 miles (1,600 kilometers) north of Perth.

Speaking by telephone from Broome, Mr. Bogucki said he ran out of food a few days into his trek and kept himself alive by eating plants and flowers. He said the ordeal had given him a “ real feeling of confidence that God will take care of you, I guess.”

Այս տեղեկատվական հաղորդագրությունը կազմված է վերնագրից, նախաբանից և երկու այլ սեղմ պարբերություններից: Վերնագիրը միանգամից գրավում է ընթերցողի ուշադրությունը և հետաքրքրություն է առաջացնում հաղորդվող նյութի նկատմամբ: Նախաբանը իմաստային տեսանկյունից ծանրաբեռնված է, քանի որ առավել հագեցած է տեղեկատվությամբ: Նրա կառուցվածքը պարզ է՝ արտահայտված դերբայական դարձվածով: Տեղեկատվական հաղորդագրության հիմնական միտքը նախաբանում է, իսկ պարբերությունները հավելյալ տեղեկություն են տալիս, ավելի մանրամասն ձևով ներկայացնում ամերիկացի զբոսաշրջիկի հետ կատարվածը: Պարբերությունները միմյանց հետ կապակցվում են հաջորդական կապով: Հեղինակը տեքստը պարբերությունների է բաժանում հաղորդվող նյութի ընկալումը հեշտացնելու, ինչպես նաև պարբերություններից յուրաքանչյուրի միտքը շեշտելու համար: Վերջին պարբերության վերջին նախադասությունը ավարտամաս է համարվում, այստեղ հեղինակը մեջբերվող անուղղակի խոսքի միջոցով արտահայտում է ամերիկացի զբոսաշրջիկի փորձությունից ստացած տպավորությունները (He said the ordeal had given him a “real feeling of confidence that God will take care of you, I guess”.):

Colombia Satirist Shot to Death

BOGOTA- Two gunmen on a motorcycle shot to death a popular Colombian satirist on Friday as he was driving to the radio station where he was a morning host, the police said.

Jaime Garzon was shot to the head as he neared the offices of Radionet in his green Jeep Cherokee, the national police chief, General Rosso Serrano, said.

Though best known for his stinging satires of Colombian personalities on television and radio, Mr. Garzon also promoted efforts to achieve peace with leftist rebels. “It could be he was murdered for his humanitarian efforts,” Mr. Serrano said.

Aida Luz Herrera, Radionet’s news director, said President Andres Pastrana had cancelled a trip to the Colombian interior because of the killing. Mr. Pastrana, who had worked with him as a fellow broadcaster, announced that the government would offer a reward for information leading to the killers.

Այս տեղեկատվական հաղորդագրությունը նույնպես բաղկացած է վերնագրից, նախաբանից և մի քանի պարբերությունից: Վերնագիրն արդեն հուշում է տեքստում տեղի ունեցած դժբախտ պատահարի մասին: Վերնագիրը, որպես առանձին ինքնուրույն միավոր, կարծես թե դուրս է գալիս տեքստի սահմաններից: Տեղեկատվական հաղորդագրության վերնագիրը կապ է հաստատում հեղինակի և ընթերցողի միջև, գրավում է ընթերցողի ուշադրությունը, հետաքրքրություն է առաջացնում, ազդում է նրա վրա, ընթերցողին հուշում է համապատասխան եզրակացություններ անել, ինչպես նաև ուղղություն է տալիս ընթերցողի մոտ ձևավորվող կարծիքին: Նախաբանը տալիս է հաղորդվող նյութի հիմնական բովանդակությունը: Նախաբանը հարաբերականորեն անկախ է, այն անմիջականորեն լույս է սփռում վերնագրում արժարժվող սեղմ տեղեկատվության վրա, մինչդեռ նրան հաջորդող պարբերությունները որոշակիորեն կախում ունեն առաջինից: Նախաբանը տեղեկություն է հաղորդում դժբախտ պատահարի վայրի մասին, ինչպես նաև, թե երբ և ում կողմից է այն կատարվել (Two gunmen on a motorcycle shot to death a popular Colombian satirist on Friday as he was driving to the

radio station where he was a morning host, the police said.), իսկ մնացած բոլոր պարբերություններում զարգանում է այդ միտքը: Ցանկացած պարբերություն իր մեջ պարունակում է մի «կտոր» նոր տեղեկություն, որը տրվում է սեղմ ձևով՝ մեկ կամ մինչև երեք նախադասությամբ: Որքան պարբերություն կա տեքստում, այնքան էլ «կտոր» տեղեկություն: Այդ ձևով հաղորդվող տեղեկությունը մի կողմից նպաստում է հետագա կոնկրետացմանը, մանրամասնելուն, իսկ մյուս կողմից գրավում և ուղղում է ընթերցողի ուշադրությունը մի նոր տեղեկության վրա: Առաջին երկու պարբերությունները սերտորեն կապված են մեկը մյուսի հետ իմաստով: Իմաստային կապը պարբերությունների միջև նաև հաջորդական է: Երրորդ պարբերությունը շարունակում է առաջին պարբերություններում արտահայտված միտքը: Սա կարելի է տեսնել երրորդ պարբերությունում, որը սկսվում է “ though” կապով, որի միջոցով էլ առաջին պարբերության միտքը զարգանում է երրորդ պարբերությունում (Though best known for his stinging satires of Colombian personalities on television and radio, Mr. Garzon also promoted efforts to achieve piece with leftist rebels.): Այստեղ հեղինակը ուստիկան Սեռանոյի՝ սպանության վերաբերյալ տեսակետն արտահայտելով՝ ընթերցողին որոշակիորեն հուշում է սպանության հնարավոր դրդապատճառները (“It could be he was murdered for his humanitarian efforts”, Mr. Serrano said.): Իսկ չորրորդ պարբերությունը եզրափակում է միտքը՝ ելնելով նախորդ երեք պարբերություններում շարադրված դեպքերի հիման վրա (Mr. Pastrana, who had worked with him as a fellow broadcaster, announced that the government would offer a reward for information leading to the killers.):

Դատելով տեքստում տեղ գտած տեղեկատվությունից՝ կարելի է ասել, որ հեղինակն այստեղ ոչ բացահայտ մոտեցնում է ցուցաբերել, նա մեծ հմտությամբ կարողացրել է տեղի ունեցածը սեղմ ձևով ներկայացնել մի փոքր հոդվածում, սակայն այստեղ բացահայտ կերպով չի երևում հեղինակի կարծիքը, սակայն տեքստի յուրօրինակ դասավորությունը, մատուցվող տեղեկատվության միտումնավոր հերթագայությունը և տեղեկատվության մատուցման եղանակը խոսում են սուբյեկտիվ մոտեցման մասին: Տեքստն ինքնին հագեցած է տեղեկատվությամբ, ունի լսարանի վրա ազդելու մեծ ուժ (Columbia Satirist Shot to Death)՝ ներկայացնելով անվանի մարդու սպանության լուրը:

Կատարված դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ ցանկացած գործառնական ոճ (մասնավորապես լրագրային ոճ) ժանրերից անջատ պարզապես գոյություն ունի որպես գիտական վերացարկություն և գրական լեզվի այս կամ այն տարատեսակի լեզվական պատկերի մասին ընդհանուր պատկերացում: Լրագրային տեքստի ժանրեր են, որ, կազմելով մեկ ամբողջություն, բնորոշում, հատկորոշում և արտացոլում են այս ոճի ընդհանուր դիմանկարը:

Լրագրային ժանրերը տարբերակող հիմնական յուրահատկություններն անշուշտ իրենց դրոշմն են թողնում համապատասխան տեքստերի կառուցվածքի (ներքին և արտաքին) և ընդհանուր կաղապարի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Boulder** Language and Communicative Practices. CO, Westview Press, 1995
2. **Rosen J.** and **Davis M.** Public Journalism: Theory and practice. Kettering Foundations, 1994
3. **Ullman J.** The Reporter's Handbook. St. Martin's Press, 1991
4. **Շալունց Ռ. Ն.** Մամուլի և հրապարակախոսության լեզուն: Եր.: ՀԱՅԳ ԳԱ հրատ., 1987
5. **Вакуров В. Н. и др.** Стилистика газетных жанров, М., Высшая Школа, 1978
6. **Гальперин И. Р.** Очерки по стилистике английского языка. М.: Высшая Школа, 1958
7. **Кожина М. Н.** К основаниям функциональной стилистики. Пермь, кн. и зд., 1968.
8. The Guardian
9. The Independent
10. The International Herald Tribune

ЖАНРОВЫЕ ИНВАРИАНТЫ И ИХ СТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ В ГАЗЕТНЫХ ТЕКСТАХ

Г. Ф. БДЕЯН

Газетный язык достаточно гибкий и в настоящее время стал самым ценным информационным источником, т. к. он предусмотрен для многочисленных читателей и должен обязательно иметь в виду различные привычки и навыки читателя. Поэтому он не может быть консервативным.

Несмотря на то, что газетный язык считается единым целым, он включает в себя 3 стилиевые подгруппы: информационный, аналитический и художественный, соответственно обеспечивая фактическое безличное и субъективное описание.

С одной стороны приоритет отдается объективной информации, а с другой — применению стилистической и личной мотивации автора. Она может быть полезной для того, чтобы информация достигла своей цели.

GENRE VERSIONS AND THEIR STYLISTIC PECULIARITIES OF NEWSPAPER TEXT

G. F. BDEYAN

The newspaper language is flexible enough and has currently become the most valuable commodity of mass media since it is anticipated for numerous readers and is to take into consideration their speech customs and skills. Thus, the mentioned language can't be conventional.

The development of newspaper genre owes much to continuous perfection and involvement of various expressive styles.

Overall though compiling a whole unity newspaper text genres cover a picture of 3 groups - merely informative, analytical and fiction, proving factual, indefinite and subjunctive descriptions accordingly.

On the one hand urgent and objective information is considered to have priority, on the other hand application of stylistic and personal motivation of authors might be beneficial for the information to reach its proper destination.